

# «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՍԱԿԱԳՆԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Ընդունվել է Բանկի Տնօրինության 27.05.2015թ. թիվ 03/59/15 որոշմամբ,  
սույն խմբագրությունը՝ 23.06.2026թ. թիվ 04/94/26 և 01.07.2026թ. թիվ 01/99/26 որոշումներով, և ուժի մեջ է 03/07/2026թ. -ից:*

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով:
2. Արտարժույթի գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի անկանխիկ առքի փոխարժեքը, բացառությամբ սույն սակագներով նախատեսված դեպքերի:
3. Բանկում հաճախորդի հաշիվներին ՀՀ դրամով բավարար միջոցներ չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միջնորդավճարի գումարը կամ դրա մի մասը փոխարկել արտարժույթով ունեցած միջոցներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը:
4. Բանկային գործառնությունների կատարման հետ կապված փոստային, հեռագրային, հեռախոսային, տելեքսային և ֆաքսիմիլային կապի ծախսերը, ինչպես նաև երրորդ բանկի ծախսերը գանձվում են լրացուցիչ:
5. Բանկը կարող է գործող սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից, բայց դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ:
6. Հիմք ընդունելով Բանկի և հաճախորդի միջև երկարատև համագործակցությունը, հաճախորդի գործարքների ծավալները և այլ հիմնավոր պատճառներ՝ Բանկի կողմից կարող են կիրառվել այլ սակագներ և դրույթներ, որոնք սահմանվում են այլ փաստաթղթերով և (կամ) լրացուցիչ կնքվող պայմանագրերով, համաձայնագրերով:
7. Սույն սակագների իմաստով «MyAmeria» համակարգը հանդիսանում է Բանկի կողմից տրամադրվող Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ ծառայության առանձնացված տարբերակ:
8. MyAmeria համակարգով կարող են իրականացվել երրորդ կողմերի ներգրավմամբ և(կամ) երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների վճարումներ, որոնց սակագները սահմանվում են երրորդ կողմերի կողմից: Գանձման ենթակա գումարի չափը (ներառյալ՝ տվյալ վճարման սակագինը) ներկայացվում է հաճախորդին յուրաքանչյուր անգամ վճարում կատարելիս՝ մինչև վճարման գործարքի՝ հաճախորդի կողմից հաստատման պահը:
9. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
10. Ծառայությունների դադարեցման դեպքում մինչ այդ վճարված միջնորդավճարները վերադարձման ենթակա չեն:

**2. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**  
(ներառյալ՝ հաշվետեր չհանդիսացող հաճախորդների սպասարկում)

Սակագին	Ստանդարտ	Պերսոնա/ Պերսոնա Ստատուս/ Պերսոնա Բլաք	Պրեմիում/ Փարթներ
1. Հաշվի բացում ծառայությունների փաթեթով: Փաթեթը <sup>1</sup> ներառում է՝ ՀՀ դրամով և մեկ արտարժույթով բանկային հաշիվ, Մեկ վճարային քարտ, <sup>2</sup> MyAmeria համակարգ: Փաթեթը գործում է միայն ՀՀ քաղաքացի հաճախորդների համար:	7,000 ՀՀ դրամ	N/A	N/A
2. Հեռավար եղանակով «Սմարթ» հաշվի բացում ծառայությունների փաթեթով <sup>3</sup> Փաթեթը <sup>1</sup> ներառում է՝ ՀՀ դրամով բանկային հաշիվ, Մեկ վճարային քարտ, MyAmeria համակարգ Փաթեթը գործում է միայն ՀՀ քաղաքացի հաճախորդների համար:	Անվճար	Անվճար	Անվճար
3. Հաշվի բացում (այդ թվում՝ հեռավար) «Ուսանողների համար» ծառայությունների փաթեթով՝ Փաթեթը <sup>1</sup> ներառում է՝ ՀՀ դրամով բանկային հաշիվ, «Ուսանողական» տեսակի մեկ քարտ <sup>4</sup> MyAmeria համակարգ	Անվճար	Անվճար	Անվճար

<sup>1</sup>Փաթեթի մեկ կամ մի քանի ծառայությունից հրաժարվելու դեպքում փաթեթի արժեքը չի փոխվում, իսկ հրաժարված ծառայությունների հետագայում մատուցման համար գործում են տվյալ ծառայությունների համար սահմանված միջնորդավճարները: Փաթեթից չեն կարող օգտվել այն հաճախորդները, որոնք օգտվում են փաթեթում ներառված որևէ ծառայությունից (այս սահմանափակումը չի տարածվում «Ուսանողների համար» փաթեթի վրա):

<sup>2</sup>Մտաջարկվում է VISA Classic կամ MasterCard Standard վճարային քարտ: Տրամադրվում է առանց տարեկան սպասարկման վճարի: Վճարային քարտի գործողության ժամկետը լրանալուց հետո վերաթողարկման դեպքում գանձվելու է միջնորդավճար՝ համաձայն բանկում այդ պահին գործող քարտերի սպասարկման սակագների և պայմանների:

<sup>3</sup> «Սմարթ» փաթեթից կարող են օգտվել այն հաճախորդները, որոնք չունեն ՀՀ դրամով բանկային հաշիվ:  
 «Սմարթ» փաթեթի սակագինը կիրառելի չէ հեռավար եղանակով Բանկի և Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների համատեղ քարտերի համար դիմելու դեպքում, ինչպես նաև հեռավար հարթակում «Սմարթ» հաշվի այլ փաթեթային առաջարկ ընտրելու դեպքում: Նշված դեպքերում գործում են Ամերիաբանկ ՓԲԸ Քարտերի սակագների համաձայն տվյալ քարտատեսակների համար սահմանված սակագները և/կամ համապատասխան փաթեթային առաջարկի համար հաստատված սակագներն ու պայմանները:

<sup>4</sup> «Ուսանողական» վճարային քարտը տրամադրվում է առանց տարեկան սպասարկման վճարի: Վճարային քարտի գործողության ժամկետը լրանալուց հետո վերաթողարկման դեպքում գանձվելու է միջնորդավճար՝ համաձայն բանկում այդ պահին գործող քարտերի սպասարկման սակագների և պայմանների:

4. Հաշվի բացում <sup>5</sup>			
4.1. Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու նպատակով ուսումնասիրություն			
4.1.1 ՀՀ քաղաքացի հաճախորդների դեպքում	Անվճար	Անվճար	Անվճար
4.1.2 ՀՀ քաղաքացի չհանդիսացող հաճախորդների դեպքում <sup>6</sup>	20,000 ՀՀ դրամ	20,000 ՀՀ դրամ	Անվճար
4.2. ՀՀ դրամով բանկային հաշիվներ <sup>7</sup>			
4.2.1 Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում, Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգով բացելու դեպքում	3,000 ՀՀ դրամ	Անվճար	Անվճար
4.2.2 Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	1,000 ՀՀ դրամ	Անվճար	Անվճար
4.2.3 MyAmeria համակարգով բացելու դեպքում	Անվճար	Անվճար	Անվճար
4.3. Արտարժույթով, այդ թվում՝ առարկայագուրկ ոսկով (0.9999 հարգի) մետաղական հաշիվներ <sup>7</sup>	3,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հաշվի համար	Անվճար	Անվճար
4.3.1 MyAmeria համակարգով բացելու դեպքում	Անվճար	Անվճար	Անվճար
5. Հաշվի նվազագույն մնացորդ <sup>8</sup>	չի կիրառվում	չի կիրառվում	չի կիրառվում
6. Հաշվի վարում <sup>9</sup>			

<sup>5</sup> Բանկային ծառայություններից օգտվելիս անհրաժեշտ է բացել ՀՀ դրամով ընթացիկ բանկային հաշիվ: Վճարային քարտ բացելիս, խնայողական հաշիվ բացելիս, ժամկետային ավանդ ներդնելիս, պարտատոմս ձեռքբերելիս, վարկային պրոդուկտ ստանալիս, անհատական պահատուփ բացելիս, բրոքերային հաշիվ բացելիս, ՀՀ կառավարության 27.12.2012թ. N 1691-Ն որոշմամբ սահմանված շահառուների համար նախատեսված Սոցիալական փաթեթի հաշիվ բացելիս, սոցիալական ապահովության ծրագրերով նախատեսված դրամական վճարների ստացման համար հաշիվ բացելիս տվյալ ծառայության համար անհրաժեշտ հաշվի բացման միջնորդավճար չի գանձվում:

Ընթացիկ հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով, շվեյցարական ֆրանկով, անգլիական ֆունտ ստերլինգով, կանադական դոլարով, ճապոնական իենով, ավստրալիական դոլարով, ԱՄԷ դիրհամով, անկանխիկ ոսկով (0.9999 հարգի), ինչպես նաև Բանկի կողմից գնանշվող այլ արժույթով, իսկ խնայողական հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով:

<sup>6</sup> Սակագինը գանձվում է Բանկի կողմից գործարար հարաբերություն հաստատելու նպատակով ուսումնասիրության արդյունքում դրական որոշում կայացնելու պարագայում: Սակագինը չի կիրառվում «Ուսանողների համար» ծառայությունների փաթեթի, Սոցիալական փաթեթի հաշվի, թոշակային քարտի և/կամ սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների ստացման դեպքում:

<sup>7</sup> Խնայողական հաշվի բացումը անվճար է:

<sup>8</sup> Հաշվի դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը սահմանվում է 0%:

<sup>9</sup> Հաճախորդի որևէ բանկային հաշվի շրջանառությունը (այդ թվում քարտային) տարածվում է հաճախորդի մնացած բոլոր հաշիվների վրա (այս դրույթը գործում է միայն միջնորդավճարի գանձման տեսանկյունից): Ընդ որում, եթե հաճախորդը ունի միայն գործող քարտ, որին կցված է քարտային հաշիվ, ապա միջնորդավճարը չի գանձվում, իսկ փակված քարտի դեպքում, քարտային հաշվից միջնորդավճարը գանձվում է սակագնին համապատասխան: Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության դեպքում հաճախորդի հաշվով դեբետագրումը սահմանափակվում է յուրաքանչյուր օրացուցային եռամսյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում հաշվով շրջանառության բացակայության և մնացորդի գրոյական լինելու դեպքում հաճախորդի հաշիվը փակվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում, բացառությամբ այն հաշիվների, որոնք անհրաժեշտ են Բանկի կողմից հաճախորդին մատուցվող այլ ծառայության սպասարկման համար: Նախորդ 12

6.1. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի բանկային հաշիվներով նվազագույնը 150,000 ՀՀ դրամին համարժեք շրջանառության առկայության կամ հաշիվների միջին օրական մնացորդը 50,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում	Անվճար	Անվճար	Անվճար
6.2. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի բանկային հաշիվներով 150,000 ՀՀ դրամից փոքր շրջանառության կամ հաշիվների միջին օրական մնացորդը 50,000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում	1,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի համար (կիրառելի չէ մինչև 2027 թվականի հունիսի 30-ը ներառյալ)	Անվճար	Անվճար
<b>7. Հաշվի հեռավար սպասարկման համակարգեր<sup>10</sup></b>			
7.1 Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգի տրամադրում. Մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքի, Ամերա Թոքեն ծրագրային ապահովման կողմի փոխարինում նորով	Միանվագ 10,000 ՀՀ դրամ	Անվճար	Անվճար
7.2 MyAmeria համակարգի տրամադրում	Անվճար	Անվճար	Անվճար
7.3 Հաճախորդի նախընտրությամբ՝ MyAmeria համակարգը մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքի միջոցով օգտագործելու համար սարքի տրամադրում կամ փոխարինում նորով	Միանվագ 10,000 ՀՀ դրամ	Անվճար	Անվճար
7.4 Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգի, MyAmeria համակարգի գաղտնաբառի վերականգնում Բանկի մասնաճյուղերում	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ Ա.Ա.Հ	Անվճար	Անվճար
7.5 Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգի սպասարկում <sup>11</sup>	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ Ա.Ա.Հ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի համար	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ Ա.Ա.Հ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի համար	Անվճար

ամիսների ընթացքում հաշվով շրջանառության բացակայության և մնացորդի զրոյական լինելու դեպքում հաճախորդի հաշիվը փակման պայմանը կիրառելի չէ մինչև 2027 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

Հաշվի վարման միջնորդավճար չի գանձվում, եթե բանկային հաշիվը, ~~առ~~ բացվել և սպասարկվում է միայն պահատուփի տրամադրման, բրոքերային հաշվի, Սոցիալական փաթեթի հաշվի, թոշակային քարտի բացման և սպասարկման, և/կամ սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների ստացման համար:

<sup>10</sup> Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

<sup>11</sup> Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող ամսվա ընթացքում: Սակագինը գանձվում է, եթե հաճախորդը գանձման պահին ունի ակտիվ Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգ:

7.6 Հեռախոս-բանկ ծառայություն <sup>12</sup>			
<b>8. Քաղվածքների, տեղեկատվական նյութերի և կրկնօրինակների տրամադրում<sup>13</sup></b>			
8.1 Մինչև 6 ամիս վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	Անվճար	Անվճար	Անվճար
8.2 6 ամսից ավելի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում առձեռն կամ ուղարկում հաճախորդի էլեկտրոնային հասցեին առանց դրոշմակնիքի <sup>14</sup>	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի և յուրաքանչյուր տարվա էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր փաստաթղթի համար	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի և էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր փաստաթղթի համար	Անվճար
8.3 Տեղեկանքների տրամադրում <sup>15</sup>			

<sup>12</sup> Հեռախոս-բանկ ծառայության շրջանակներում իրականացվում են հետևյալ գործարքները՝ ստորև նշված սահմանաչափերով (ծառայությունը կիրառելի է մինչև 15/03/2026թ.-ը ներառյալ ծառայությունը ակտիվացրած հաճախորդների համար)՝

N	Գործարքի տեսակ	1 գործարքի սահմանաչափ (ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, որի դեպքում սահմանաչափը հաշվարկվում է ԿԲ փոխարժեքով)
1	ձայնային տեղեկատվության ստացում առկա հաշիվների վերաբերյալ՝ հեռախոսակապի միջոցով	սահմանաչափ չի կիրառվում
2	արտարժույթի առուվաճառքի գործարք կատարելու նպատակով գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի սահմանում (համաձայնեցում) Բանկի հետ հեռախոսակապի միջոցով	սահմանաչափ չի կիրառվում
3	ներբանկային փոխանցումներ հաճախորդի հաշիվների միջև	մինչև 10, 000,000 ՀՀ դրամ
4	ներբանկային փոխանցումներ այլ հաճախորդի հաշիվներին	մինչև 10,000,000 ՀՀ դրամ
5	արտարժույթի անկանխիկ փոխարկում	մինչև 10,000,000 ՀՀ դրամ
6	ՀՀ այլ Բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը նշված փոխանցումն արդեն իսկ կատարել է նույն վավերապայմաններով	մինչև 5,000,000 ՀՀ դրամ
6.1	ՀՀ այլ Բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը առաջին անգամ է կատարում նշված փոխանցումը	մինչև 3,000,000 ՀՀ դրամ
7	միջազգային փոխանցումներ	օրական առավելագույնը 2,000,000 ՀՀ դրամ
8	կոմունալ վճարումներ	մինչև 1,000,000 ՀՀ դրամ
9	արագ դրամական փոխանցումների սպասարկում	սահմանաչափ չի կիրառվում

<sup>13</sup> 6 ամիս է համարվում 184 օրացուցային օրը:

<sup>14</sup> Մակագինը չի կիրառվում Բնակելի նշանակության անշարժ գույքի ձեռքբերման/վերանորոգման/կառուցապատման վարկերի քաղվածքների տրամադրման դեպքում:

<sup>15</sup> Հաճախորդին տեղեկանքի տրամադրման պահին կարող է անվճար տրամադրվել տեղեկանքի առավելագույնը երեք կրկնօրինակ:

8.3.1 Բանկի կողմից սահմանված ձևանմուշով տեղեկանքի տրամադրում Բանկի տարածքում պատվիրելու դեպքում <sup>16 17</sup>	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	Անվճար
8.3.2 Բանկի կողմից սահմանված ձևանմուշից տարբերվող տեղեկանքի տրամադրում Բանկի տարածքում պատվիրելու դեպքում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	Անվճար
8.3.3 Բանկի կողմից սահմանված ձևանմուշով տեղեկանքի տրամադրում Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգով, Բանկի կայքով պատվիրելու դեպքում <sup>18</sup>	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	Անվճար	Անվճար
8.3.4 Բանկի կողմից սահմանված ձևանմուշից տարբերվող տեղեկանքի տրամադրում Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգով, Բանկի կայքով պատվիրելու դեպքում <sup>19</sup>	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	Անվճար	Անվճար
8.4 Քաղվածքի առաքում			
8.4.1 Էլեկտրոնային եղանակով	Անվճար	Անվճար	Անվճար
8.4.2 Փոստով՝ ՀՀ տարածքում <sup>20</sup>	Ամսական 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	Ամսական 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	Ամսական 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
8.4.3 Փոստով՝ ՀՀ տարածքից դուրս <sup>21</sup>	Համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի	Համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի	Համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի
8.5 Քաղվածքների և/կամ այլ պարտադիր ներկայացման ենթակա ծանուցումների ստացման եղանակի փոփոխություն			
8.5.1 Տարեկան մեկ անգամ	Անվճար	Անվճար	Անվճար

<sup>16</sup>Սահմանված ձևանմուշը ներառում է տեղեկատվություն տվյալ ծառայության գծով կատարված շրջանառության և մնացորդի վերաբերյալ: Բանկն ունի սահմանված ձևանմուշեր հաշվի, քարտի, խնայողական հաշվի, ավանդի, վարկի՝ միայն Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական ջրակցության 2024-2026 թվականների ծրագրի շահառուների համար, հայտարարագրման ենթակա եկամուտների, արժեթղթերի (երբ Բանկը հաճախորդի արժեթղթերի պահառու է) համար, սոցիալական փաթեթի հաշվի առկայության և սոցիալական փաթեթի հաշվով պարտավորություններ ունենալու/չունենալու համար:

<sup>17</sup>Սոցիալական փաթեթի հաշվի առկայության և սոցիալական փաթեթի հաշվով պարտավորություններ ունենալու/չունենալու վերաբերյալ սահմանված ձևանմուշների տեղեկանքների տրամադրման համար սակագին չի կիրառվում:

<sup>18</sup> Տեղեկանքի հայտը պետք է ներկայացված լինի առնվազն մեկ բանկային օր առաջ:

<sup>19</sup> Տեղեկանքի հայտը պետք է ներկայացված լինի առնվազն երեք բանկային օր առաջ:

<sup>20</sup> Միջնորդավճարը գանձվում է քաղվածքը ստանալու ամսվա դիմաց մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ: Նշված միջնորդավճարը կկիրառվի 01/04/2026-ից, մինչ այդ կկիրառվի ամսական 1000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) միջնորդավճար:

<sup>21</sup> Առաքումը կատարվում է ռեգուլյար փոստի միջոցով:

8.5.2 Տարեկան երկու և ավել անգամ			
8.5.2.1 Հանձնարարականը Բանկի տարածքում կամ ԻԲ համակարգով ներկայացնելու դեպքում	Անվճար	Անվճար	Անվճար
8.5.2.2 Հանձնարարականը Բանկի համար ընդունելի այլ եղանակով ներկայացնելու դեպքում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
9 Կոմունալ վճարումների պարբերական գանձման կատարում	Անվճար	Անվճար	Անվճար
10 Հաճախորդների կողմից ներկայացված պարբերական հանձնարարականների կատարում <sup>22</sup>	Անվճար	Անվճար	Անվճար
11 Հաճախորդի կողմից լիազորագրի տրամադրում (Լիազորողի փաստացի ներկայությամբ կամ Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգով)	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	Անվճար
12 Հաշվետեր չհանդիսացող հաճախորդի կողմից դրամարկղային գործարքի իրականացում, եթե տվյալ գործարքի համար սույն փաստաթղթով այլ սակագին սահմանված չէ <sup>23</sup>			
12.1 Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	1,000 ՀՀ դրամ	N/A	N/A
12.2 Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	500 ՀՀ դրամ	N/A	N/A
13 Հաշվետեր չհանդիսացող հաճախորդի կողմից բանկային ծառայություններից օգտվելու նպատակով ներկայացված հայտի դիտարկում <sup>24</sup> , եթե սույն փաստաթղթով տվյալ տեսակի հայտի համար այլ սակագին սահմանված չէ:	1,000 ՀՀ դրամ	N/A	N/A
14 Տեսագանգի միջոցով հաճախորդի նույնականացում <sup>25</sup>	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

<sup>22</sup> Պարբերական հանձնարարականում պարտադիր պետք է հստակ ներկայացված լինի գործարքի ամսաթիվը, արժույթը, գումարը, ստացողի անունը/հաշվի համարը:

<sup>23</sup> Սակագինը չի կիրառվում արտարժույթի փոխարկման գործարքների դեպքում, եթե տվյալ արտարժույթի համար սույն փաստաթղթով այլ սակագին սահմանված չէ:

<sup>24</sup> Սակագինը չի կիրառվում տրանսպորտային միջոցի ձեռքբերման սպառողական վարկի հայտի դիտարկման դեպքում:

<sup>25</sup> Տեսագանգի միջոցով նույնականացում կարող է կատարվել այն դեպքում, երբ տվյալ ծառայության մատուցման համար նույնականացման սույն տարբերակը Բանկի համար համարվում է ընդունելի: Սակագինը չի կիրառվում հեռավար եղանակով հաշվի բացման ընթացքում իրականացվող տեսագանգի դեպքում:

### 3. ԿԱՆԽԻԿՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ<sup>26</sup>

Սակագին	Ստանդարտ	Պերսոնա/ Պերսոնա Ստատուս/ Պերսոնա Քլաբ	Պրեմիում/ Փարթներ
<b>1. Կանխիկ միջոցների մուտքագրում հաճախորդի հաշվին</b>			
1.1. ՀՀ դրամ <sup>27</sup>			
1.1.1. Մինչև 399,000 ՀՀ դրամը ներառյալ <sup>28</sup>	500 ՀՀ դրամ	500 ՀՀ դրամ	Անվճար
1.1.2. 399,000 ՀՀ դրամից ավելի	Անվճար	Անվճար	Անվճար
1.2. ԱՄՆ դոլար, եվրո <sup>29</sup>	Անվճար	Անվճար	Անվճար
1.3. Բրիտանական ֆունտ, շվեյցարական ֆրանկ, կանադական դոլար, ավստրալական դոլար, ճապոնական իեն, ՄԱԷ դիրհամ, չինական յուան, վրացական լարի <sup>30</sup>	3%	3%	Օրական մինչև ներառյալ 10,000 բրիտանական ֆունտ, շվեյցարական ֆրանկ և այլ արտարժույթի դեպքում՝ անվճար Վերոնջյալ սահմանաչափերից ավելի դեպքում գերազանցող մասի նկատմամբ՝ 3%
1.4. ՌԴ ռուբլի	5%	5%	5%

<sup>26</sup> 1.3, 1.4 կետերում միջնորդավճարները ենթակա են գանձման հաշվետեր և ոչ հաշվետեր հաճախորդների կողմից նշված կետերում թվարկված արժույթներով որևէ գործարքի կատարման դեպքում, բացառությամբ արտարժույթի փոխարկման գործարքներից:

<sup>27</sup> 2.2.3 կետում միջնորդավճարը ենթակա է գանձման ոչ հաշվետեր հաճախորդներին կանխիկ ռուբլուց տարբերվող արտարժույթի տրամադրման դեպքում, բացառությամբ արտարժույթի փոխարկման գործարքների:

<sup>28</sup> Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվին կանխիկի մուտքագրման համար, անկախ գումարի մեծությունից, գանձվում է մուտքագրվող գումարի 0.3%, սակայն ոչ պակաս քան 5,000 ՀՀ դրամ:

<sup>29</sup> Բացառությամբ հետևյալ դեպքերի, որոնց պարագայում հաշվին կանխիկ միջոցների մուտքագրման դեպքում միջնորդավճար չի գանձվում.

- Միջնորդավճարի գանձման նպատակով կանխիկի մուտքագրում,
- Ժամկետային ավանդ ներդնելիս կանխիկի մուտքագրում,
- Մասնագետ-գանձապահի միջոցով կատարվող այլ գործարքների (ներառյալ հաշվից փոխանցում, նույն հաճախորդի այլ հաշիվներին կանխիկի մուտքագրում, արտարժույթի փոխանակում, վարկի վաղաժամկետ մարում) ներառյալ ՀՀ Պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ նոտարական գրասենյակներին, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակներին և պետական այլ մարմինների հաշիվներին կատարվող փոխանցումների) հետ միաժամանակ իրականացվող կանխիկի մուտքագրում:

<sup>29</sup> 500 եվրո արժողությամբ թղթադրամների հաշվին մուտքագրման համար կիրառվում է 2% միջնորդավճար: 500 եվրո արժողությամբ թղթադրամներ ընդունվում են միայն Գլխամասային գրասենյակում: 1996 թվականից մինչև 2008 թվականը ներառյալ թողարկված 100 անվանական արժեքով ԱՄՆ դոլար թղթադրամների հաշվին մուտքագրման համար կիրառվում է 1% միջնորդավճար:

<sup>30</sup> Ժամկետային ավանդ ներդնելիս կանխիկի մուտքագրումը կատարվում է անվճար: Ավանդի ներդրումից հետո 30 օրվա ընթացքում ժամկետից շուտ ընդհատվող ավանդների դեպքում ավանդը մարելիս գանձվում է միջնորդավճար՝ Բանկում գործող կանխիկի մուտքի դրույքաչափի չափով:

2. Կանխիկի տրամադրում <sup>31</sup>			
2.1. Հաճախորդի հաշվին կանխիկ մուտքագրված միջոցներից	Անվճար	Անվճար	Անվճար
2.2. Հաճախորդի հաշվին անկանխիկ մուտքագրված միջոցներից <sup>32</sup>			

<sup>31</sup> Կանխիկ միջոցների տրամադրումն իրականացվում է ստորև ներկայացված աղյուսակի հիման վրա.

Գրասենյակ	Կանխիկի տրամադրում առանց նախապես ներկայացված հայտի	Կանխիկի տրամադրում նախապես ներկայացված հայտի հիման վրա		
	Պահանջվող կանխիկ գումար (տրամադրվում է հայտը ներկայացնելու գործառնական օրվա ընթացքում)	Պահանջվող կանխիկ գումար	Կանխիկ գումարի տրամադրման ժամկետ մինչև 13:00 հայտ ներկայացնելու դեպքում	Կանխիկ գումարի տրամադրման ժամկետ 13:00-ից հետո հայտ ներկայացնելու դեպքում
Կամար մասնաճյուղ/Գլխամասային գրասենյակ	Մինչև 30 մլն ՀՀ դրամ, 50,000 ԱՄՆ դոլար, 30,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	30 մլն ՀՀ դրամից, 50,000 ԱՄՆ դոլարից, 30,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 3 գործառնական օրվա ընթացքում	Մինչև 4 գործառնական օրվա ընթացքում
Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղեր (բացառությամբ Կամար մ/ճ-ի)	Մինչև 20 մլն ՀՀ դրամ, 25,000 ԱՄՆ դոլար, 15,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	20 մլն ՀՀ դրամից, 25,000 ԱՄՆ դոլարից, 15,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 3 գործառնական օրվա ընթացքում	Մինչև 4 գործառնական օրվա ընթացքում
Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղեր	Մինչև 10 մլն ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար, 10,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	10 մլն ՀՀ դրամից, 10,000 ԱՄՆ դոլարից, 10,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 5 գործառնական օրվա ընթացքում	

Այն դեպքում, երբ հաշվից կանխիկացումից հետո հաճախորդը փակում է Բանկում առկա բոլոր հաշիվները և հաճախորդի հաշիվների մնացորդը փոքր է սակագներով սահմանված կանխիկացման նվազագույն գումարից, կանխիկացումից միջնորդավճար չի գանձվում:

<sup>32</sup> Կանխիկի տրամադրման միջնորդավճար չի գանձվում հետևյալ միջոցների կանխիկացման դեպքերում.

- 91 օր և ավել ժամկետով ներդրված, ինչպես նաև 31 օրով ներդրված և 3 անգամ անընդմեջ երկարաձգված ավանդների գումարների դեպքում (բացառությամբ ավանդատուի նախաձեռնությամբ պայմանագրի ժամկետից շուտ դադարեցվող ավանդների);
- ընդհատման հնարավորություն ունեցող ավանդների պայմանագրի ժամկետից շուտ դադարեցվող գումարների դեպքում, եթե դադարեցումը կատարվում է ավանդի ներդրումից առնվազն 91 օր հետո;
- նվազեցման հնարավորություն ունեցող ավանդների պայմաններով նախատեսված չափով նվազեցվող գումարների դեպքում;
- Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերի գումարների դեպքում՝ մինչև պարտատոմսի մարման ժամկետը պարտատոմսը պահպանելու դեպքում;
- ավանդների, խնայողական հաշիվների միջոցների նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարների և պարտատոմսերի արժեկտրոնների վճարման դեպքում:

Բանկի կողմից վարկի տրամադրումից առաջացած գումարներից կիրառվում է նշված սակագինը, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ սակագին չի սահմանվում:

2.2.1. ՀՀ դրամ			
2.2.1.1. Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	0.2%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ	0.2%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ	Անվճար
2.2.1.2. Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	0.1%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ	0.1%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ	Անվճար
2.2.2. ՌԴ ռուբլի	Անվճար	Անվճար	Անվճար
2.2.3. ԱՄՆ դոլար, եվրո, բրիտանական ֆունտ, շվեյցարական ֆրանկ, կանադական դոլար, ավստրալական դոլար, ճապոնական իեն, ՄԱԷ դիրհամ, չինական յուան, վրացական լարի	1%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ	1%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ	0.75%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
2.3. Ամերիաբանկի կանխիկացման կետերում (POS տերմինալ) այլ բանկերի կողմից թողարկված պլաստիկ քարտերով կանխիկ տրամադրում	3 %, նվազագույնը՝ 2,000 ՀՀ դրամ	3 %, նվազագույնը՝ 2,000 ՀՀ դրամ	3 %, նվազագույնը՝ 1,500 ՀՀ դրամ
2.4. Ամերիաբանկի բանկոմատներից <sup>33</sup>			
2.4.1 ՀՀ այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով	500 ՀՀ դրամ	500 ՀՀ դրամ	500 դրամ
2.4.2 Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով	1,500 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ
2.5. Կանխիկ տրամադրում հաշվետեր չհանդիսացող հաճախորդներին	1%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ	N/A	N/A
2.6. Հաշվետեր հաճախորդների կողմից ներկայացվող ներբանկային (Ամերիաբանկի համակարգում) փոխանցումներից կանխիկ միջոցների տրամադրում հաշվետեր չհանդիսացող հաճախորդներին <sup>34</sup>			
2.6.1. ՀՀ դրամի դեպքում	0.3%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ	N/A	N/A

<sup>33</sup>Սույն սակագները կգործեն դրանց կիրառման վերաբերյալ Բանկի պաշտոնական կայքում հայտարարության տեղադրման պահից:

<sup>34</sup> Նշված դեպքում փոխանցվող գումարը չի կարող գերազանցել 300,000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

2.6.2. Արտարժույթի դեպքում	1%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ	N/A	N/A
2.7. Ամերիաբանկի բանկոմատներից՝ MyAmeria համակարգից ձևավորված կողի միջոցով (ՀՀ դրամով) <sup>35</sup>	Անվճար	Անվճար	Անվճար
3. Հաշվետեր չհանդիսացող հաճախորդներից ՀՀ դրամի թղթադրամների և մետաղադրամների ընդունում և փոխանակում <sup>36</sup>			
3.1. Յուրաքանչյուր դրամանիշից մինչև 50- ական հատ ներառյալ	Անվճար	N/A	N/A
3.2. Յուրաքանչյուր դրամանիշից 50-ական հատից ավելի (գերազանցող մասով)	1 հատը 10 ՀՀ դրամ, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 10,000 ՀՀ դրամ	N/A	N/A
4. 1996 թվականից մինչև 2008 թվականը ներառյալ թողարկված 100 անվանական արժեքով ԱՄՆ դոլար թղթադրամների փոխանակում այլ թղթադրամներով կամ փոխարկում այլ արժույթի	1%	1%	1%
5. 500 եվրո արժողությամբ թղթադրամների փոխանակում այլ թղթադրամներով կամ փոխարկում այլ արժույթի <sup>37</sup>	2%	2%	2%
6. Հաշվետեր չհանդիսացող հաճախորդների արտարժույթային դրամանիշների փոխանակում այլ դրամանիշներով	2%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ	N/A	N/A
7. Արտարժույթի մետաղադրամների ընդունում			
6.1 Եվրո (ընդունվում են 1 Եվրո և ավելի մետաղադրամներ)	Ընդունվող գումարի 20%	Ընդունվող գումարի 20%	Ընդունվող գումարի 20%
6.2 ԱՄՆ դոլար և այլ արտարժույթների մետաղադրամներ	Չի ընդունվում	Չի ընդունվում	Չի ընդունվում

<sup>35</sup>Կանխիկացումը կարող է իրականացվել MyAmeria համակարգում համապատասխան հայտի հիման վրա ձևավորված կանխիկացման կողը օգտագործելով: Կողով կանխիկացում հնարավոր է իրականացնել ընթացիկ, խնայողական, քարտային ՀՀ դրամով հաշիվներից: Կանխիկացման կողը հնարավոր է օգտագործել մեկ անգամ, և այն վավեր է 15 րոպե: Կանխիկացման կողով կանխիկացման մեկ գործարքի նվազագույն սահմանաչափը 1,000 ՀՀ դրամ է, իսկ առավելագույն սահմանաչափը՝ 500,000 ՀՀ դրամ: Յուրաքանչյուր հաշվից կանխիկացման կողով օրական առավելագույնը կարող է կատարվել կանխիկացման հինգ գործարք՝ ընդհանուր առավելագույնը 1,000,000 ՀՀ դրամ գումարի չափով:

<sup>36</sup> Ծառայությունը հասանելի չէ Բանկի «Արշակունյաց» և «Երիտասարդական», «Դալմա», «Դավթաշեն», «Հումպլեքս» և «Մաշտոց» մասնաճյուղերում:

<sup>37</sup> 500 եվրո արժողությամբ թղթադրամներ ընդունվում են միայն Գլխամասային գրասենյակում:

<b>8. Հնամաշ դրամանիշերի փոխանակում<sup>38</sup></b>			
7.1 ՀՀ դրամ	Անվճար	Անվճար	Անվճար
7.2 Եվրո, ԱՄՆ դոլար	3%	3%	1%
7.3 ՌԴ ռուբլի	2%	2%	1%
7.4 Բրիտանական ֆունտ ստեռլինգ, Շվեյցարական ֆրանկ, Կանադական դոլար, Ավստրալական դոլար, ՄԱԷ դիրհամ, չինական յուան, վրացական լարի	5%	5%	5%
<b>9. Կանխիկ արժույթի ստուգում և փաթեթավորում (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, բրիտանական ֆունտ, ՌԴ ռուբլի և շվեյցարական ֆրանկ)</b>	Ստուգվող և փաթեթավորվող գումարի 0.1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ	Ստուգվող և փաթեթավորվող գումարի 0.1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ	Անվճար
<b>10. Կոմունալ վճարումների ընդունում բանկի դրամարկղերում հաշվետեր հանդիսացող հաճախորդների համար<sup>39</sup></b>	Անվճար	Անվճար	Անվճար
<b>11. Կանխիկի ինկասացիա</b>			
10.1 Մինչև 5 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	N/A	N/A	2. կետով սահմանված միջնորդավճար+ 10,000 ՀՀ դրամ
10.2 5 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	N/A	N/A	2. կետով սահմանված միջնորդավճար+ 0.1%+ինկասացիայի փաստացի ծախս
<b>12. Կանխիկ արտարժույթի փոխանակում Ամերիաբանկի ԱԳՄ-երի (բանկոմատների) միջոցով<sup>40</sup></b>	1-99 ՀՀ դրամ <sup>41</sup> կամ 1-999 ՀՀ դրամ <sup>42</sup>	1-99 ՀՀ դրամ <sup>40</sup> կամ 1-999 ՀՀ դրամ <sup>41</sup>	1-99 ՀՀ դրամ <sup>40</sup> կամ 1-999 ՀՀ դրամ <sup>41</sup>

<sup>38</sup> Արտարժույթով հնամաշ դրամանիշերի փոխանակման դեպքում փոխարկումը կատարվում է Բանկի կողմից սահմանված՝ տվյալ արտարժույթի կանխիկ առքի փոխարժեքով:

